Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
դեկտեմբերի 2-ի N 1985 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության 2015 թվականի
մարտի 19-ի N 596-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ԱԿՏԵՐԸ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. N 1 հավելվածով նախատեսված քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվությունները տեղական ինքնակառավարման մարմինը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե է ներկայացնում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային համակարգի ինստիտուցիոնալ ցանցի միջոցով:

2. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են դրանց բնօրինակների տեսաներածված պատճեններն էլեկտրոնային համակարգ վերբեռնելու միջոցով, ընդ որում՝

1) փաստաթղթերի տեսաներածված պատճեններն պետք է ներկայացվեն PDF ֆորմատի ֆայլերով.

2) փաստաթղթերի բնօրինակները պետք է տեսաներածված լինեն գունավոր՝ առնվազն 300 ՀՏՎ (DPI) խտությամբ, այնպես, որպեսզի փաստաթղթի տեսաներածված պատճենի ֆայլը պարունակի բնօրինակ փաստաթուղթն ամբողջությամբ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ